ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի
«Քաղաքացիական իրավունք և դատավարություն» մասնագիտացմամբ
մագիստրատուրայի
2016/17 ուսումնական տարվա ընդունելության քննության

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Իրավաբանական գիտությունների համակարգը (դասակարգումը): Պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի՝ որպես գիտությունների առանձնահատկությունները:
2. Պետություն և հասարակություն. հասկացությունները և հատկանիշները:
3. Պետական իշխանություն. հասկացությունը և իրականացման հիմնական եղանակները: Պետական իշխանության իրականացման իրավական ձևերը:
4. Պետության գործառույթներ. նշանակությունը, դասակարգումը և իրականացման մեթոդները:
5. Պետության ձև. հասկացությունը և տարրերը:
6. Պետական կառավարման ձև. հասկացությունը և տեսակները:
7. Պետական կառուցվածքի ձև. հասկացությունը և տեսակները:
8. Պետաիրավական ռեժիմ. ռեժիմների դասակարգումը: «Պետական ռեժիմ» և «քաղաքական ռեժիմ»:
9. Ժողովրդավարական և հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմները:
10. Պետության կառուցակարգ (պետական մեխանիզմ). հասկացությունը և հատկանիշները:
11. Պետական ապարատ. հասկացությունը, հատկանիշները և կառուցվածքը:
12. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները: Իշխանությունների բաժանում և հավասարակշռում, իրավական օրինականություն, ժողովրդավարություն (ժողովրդաիշխանություն):
13. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ. դրանց բնութագիրը և դասակարգումը:
14. Քաղաքացիական հասարակություն. հասկացությունը և հատկանիշները:
15. Հասարակական և քաղաքական կազմակերպություններ. դրանց սոցիալական դերը և գործառույթները:
16. Եկեղեցին (կրոնական կազմակերպությունները) հասարակական-քաղաքական և սոցիալական-մշակութային համակարգերում:
17. Պետության և իրավունքի ծագման տեսությունները:
18. Իրավունք և օրենք. դրանց հասկացությունները և հարաբերակցությունը:
19. Իրավունքը սոցիալական կարգավորման համակարգում: Իրավունքի հատկանիշները:
20. Սոցիալական նորմերը և իրավունքի տեղը դրանց համակարգում:
21. Իրավունքի սկզբունքներ. հասկացությունը և տեսակները: Իրավահավասարության սկզբունք, մարդասիրության սկզբունք, իրավունքի և պարտականության միասնության սկզբունք, իրավունքի (օրենքի) գերակայության սկզբունք:
22. Իրավունքի աղբյուր (ձև). հասկացությունը և դասակարգումը:

23. Իրավունքի նորմ. հասկացությունը և հատկանիշները:
24. Իրավունքի նորմի կառուցվածքային տարրերը: Իրավունքի նորմերի հիմնական տեսակները:
25. Իրավունքի համակարգ. հասկացությունը և հատկանիշները:
26. Իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերը: Իրավունքի համակարգի հիմնական ճյուղերը:
27. Իրավունքի համակարգ և օրենսդրական համակարգ. դրանց բնութագիրը և հարաբերակցությունը:
28. Իրավական ակտ. հասկացությունը և գործողությունը տարածության ու ժամանակի մեջ:
29. Նորմատիվ իրավական ակտ. հասկացությունը, հետադարձ ուժը և դրա արգելքի ընդհանուր կանոնը:
30. Իրավական ակտի (Նորմատիվ իրավական ակտի) մեկնաբանում և պարզաբանում. բնութագիրը և դրանց հարաբերակցությունը:
31. Իրավունքի անալոգիա և օրենքի անալոգիա. դրանց բնութագիրը և հարաբերակցությունը:
32. Հասարակական հարաբերությունները և իրավահարաբերության տեղը դրանց համակարգում:
33. Իրավահարաբերություն. հասկացությունը, հատկանիշները և տեսակները:
34. Իրավահարաբերության օբյեկտ և իրավահարաբերության սուբյեկտ. դրանց հասկացությունը և հարաբերակցությունը: Իրավասուբյեկտություն:
35. Իրավաբանական փաստեր. հասկացությունը և տեսակները:
36. Իրավաչափ վարքագիծ. հասկացությունը, առանձնահատուկ գծերը և տեսակները:
37. Իրավախախտում. հասկացությունը, հատկանիշները, իրավաբանական կազմը:
38. Իրավական պատասխանատվություն. հասկացությունը, հատկանիշները և նպատակը:
39. Իրավական պատասխանատվության հիմքերը և սկզբունքները քրեական ու վարչական իրավունքներում:
40. Իրավական համակարգեր. բնութագիրը և դասակարգումը ժամանակակից աշխարհում:
41. Իրավունքներ, ազատություններ և պարտականություններ. հասկացությունը և դասակարգումը:
42. Իրավունքներ (ազատություններ) և օրինական շահեր. բնութագիրը և հարաբերակցությունը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

43. Սահմանադրական իրավունքի ճյուղի հասկացությունը: «Սահմանադրական իրավունք» և «պետական իրավունք»:
44. Սահմանադրական իրավունքի՝ որպես ճյուղի և գիտության առարկաները և մեթոդները:
45. Սահմանադրական իրավունքի տեղը և դերը պետության իրավական համակարգում:
46. Սահմանադրական իրավահարաբերությունները և սահմանադրական իրավունքի սուբյեկտները:

47. Սահմանադրական իրավունքի աղբյուրները և դրանց դասակարգումը:
48. Սահմանադրության հասկացությունը, էությունը և սոցիալական գործառույթները
49. Սահմանադրության կարգավորման առարկան (օբյեկտը):
50. Սահմանադրությունների դասակարգումը:
51. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակումը, ընդունումը, փոփոխումը և դադարումը:
52. Պետության ձևը Հայաստանի Հանրապետությունում:
53. Միապետություն և հանրապետություն. դրանց տեսակները:
54. Ունիտար պետություն և դաշնային պետություն. բնութագիրը և տեսակները: Համադաշնությունը և դրա առանձնահատկությունը:
55. Պետության գլխի հասկացությունը և տեղը պետական իշխանության համակարգում:
56. Միապետ և Նախագահ. Կարգավիճակը և լիազորությունները:
57. Կառավարություն. նշանակությունը, տեսակները և լիազորությունները:
58. Խորհրդարանը՝ որպես օրենսդիր և ներկայացուցչական մարմին:
59. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները և ընդունած ակտերը:
60. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կառուցվածքը: Մշտական և ժամանակավոր հանձնաժողովները, խմբերը և խմբակցությունները:
61. Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության սոցիալական դերը, կառուցվածքը և տեղը պետական իշխանության համակարգում:
62. Սահմանադրական արդարադատության հասկացությունը և սոցիալական գործառույթը:
63. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան. կարգավիճակը, գործառույթները և սոցիալական դերը:
64. Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ. կարգավիճակը, գործառույթները և սոցիալական դերը:
65. Հայաստանի Հանրապետության դատախազություն. կարգավիճակը, գործառույթները և սոցիալական դերը:
66. Փաստաբանական ծառայությունը և արդարադատության իրականացմանն աջակցող մյուս մարմինները Հայաստանի Հանրապետությունում:
67. Կուսակցությունները Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում: Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը:
68. Ընտրական իրավունք. ընտրությունները պետության քաղաքական համակարգում:
69. Ընտրական համակարգերը և դրանց տեսակները:
70. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:
71. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման հիմքերն ու կարգը:
72. Երկքաղաքացիությունը Հայաստանի Հանրապետությունում:
73. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

74. Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների սոցիալական դերը և կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

75. Քաղաքացիական իրավունքի օբյեկտները: Իրերի հասկացությունը և դասակարգումը:
76. Սեփականության իրավունքի ձեռքբերման և դադարման հիմքերը Հայաստանի Հանրապետությունում:
77. Ընդհանուր սեփականության իրավունքը և դրա տեսակները:
78. Հողը՝ որպես սեփականության իրավունքի օբյեկտ: Սերվիտուտ որպես գույքային իրավունք:
79. Քաղաքացին՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: Քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը:
80. Իրավաբանական անձը՝ որպես քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտ:
81. Գործարքներ. հասկացությունը և տեսակները:
82. Պարտավորություններ. հասկացությունը և դրանց դասակարգումը:
83. Քաղաքացիաիրավական պայմանագիր. հասկացությունը և տեսակները: Քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման և դադարեցման (լուծման) կարգը Հայաստանի Հանրապետությունում:
84. Մտավոր սեփականության իրավունք. հասկացությունը և առանձնահատկությունը:
85. Հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները Հայաստանի Հանրապետությունում:
86. Արտոնագրային իրավունք. հասկացությունը և առանձնահատկությունը
87. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցները:
88. Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները քաղաքացիական իրավունքում:
89. Քաղաքացիական դատավարության իրավունքը որպես իրավունքի ճյուղ:
90. Քաղաքացիական դատավարության սկզբունքները:
91. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերություններ:
92. Կողմերը քաղաքացիական դատավարությունում:
93. Երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում:
94. Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը:
95. Այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք քաղաքացիական դատավարությունում:
96. Ներկայացուցչությունը դատարանում:
97. Քաղաքացիական գործերի ենթակայություն:
98. Դատավարական ժամկետներ:
99. Դատական ծախսեր:
100. Հայց:
101. Ապացուցում և ապացույցներ:

102. Հայցային գործերով քաղաքացիական գործի հարուցումը դատարանում:
103. Գործը դատաքննության նախապատրաստելը:
104. Դատաքննություն:
105. Գործի քննության հետաձգումը և վարույթի կասեցումը:
106. Գործի վարույթն ավարտելը՝ առանց վեճն ըստ էության լուծելու:
107. Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը:
108. Պարզեցված վարույթները քաղաքացիական դատավարությունում:
109. Հատուկ վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները:
110. Դատական ակտերի վերանայումը վերաքննության կարգով:
111. Դատական ակտերի վերանայումը վճռաբեկության կարգով:
112. Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

113. Վարչարարության հասկացությունը և իրավական ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում:
114. Վարչական վարույթի հասկացությունը և կիրառման շրջանակները:
115. Վարչական վարույթի փուլերի ընդհանուր նկարագիրը, մասնակիցները:
116. Վարչական ակտի հասկացությունն ու ձևերը, տեսակները և ընդունման ընթացակարգերը:
117. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության ընդհանուր կարգը:
118. Վարչական արդարադատության հասկացությունը և իրավական հիմքերը, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդիրները:
119. Վարչական դատավարության հասկացությունն ու նշանակությունը :
120. Վարչական դատավարության կազմակերպահիրավական ապահովումը:
121. Վարչական դատավարական իրավունակությունը և գործունակությունը, դատարան դիմելու իրավունքը:
122. Վարչական դատավարության փուլերը և դատական ակտերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետության և իրավունքի տեսություն

1. Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն—1 (դասախոսություններ): ԵՊՀ, Հեղինակային հրատ., Եր., 2010
2. Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն—2 (դասախոսություններ): ԵՊՀ, Հեղինակային հրատ., Եր., 2011
3. Խրոպանյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն: Դասագիրք, <<Երևանի Համալսարան>>, Եր., 1997
4. Нерсесянц В. С. Общая теория права и государства. Учебник, <<НОРМА>>, М., 1999
5. Теория государства и права: Учебник для вузов, под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. 2-е изд., изм. и доп., <<НОРМА>>, М. 2002
6. Теория государства и права: Учебник, под ред. В.М. Карельского и В.Д. Перевалова, 3-е издание, Интерстиль, <<Омега-Л>>, М., 2008
7. Хропанюк В.Н. Теория государства и права: Учебник, 3-е издание, <<Интерстиль>>, М., 2008

Սահմանադրական իրավունք

8. Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական վերահսկողություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, <<Նժար>>, Եր., 2002
9. Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: <<Գիտություն>>, Եր., 1997
10. Խաչատրյան Հ.Մ. Սահմանադրությունը և կոնստիտուցիոնալիզմի հիմնահարցերը: <<Հայագիտակ>>, Եր., 1998
11. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատասխ. խմբ. Ն.Ա. Այվազյան, <<Երևանի համալսարան>>, Եր., 2008
12. Избирательные системы и технологии: Учебное пособие, <<Вузовский учебник>>, М., 2005
13. Конституционное (государственное) право зарубежных стран: Том 1-2, общая часть, ответ. ред. Б.А. Страшун, <<БЕК>>, М., 1996
14. Стравнительное конституционное право: Учебное пособие, ответ. Ред. Чиркина В.Е., <<Междунаровные отношения>>, М., 2002

Քաղաքացիական իրավունք, քաղաքացիական դատավարություն, վարչական իրավունք

15. Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: <<Երևանի համալսարան>>, Եր., 2000
16. Бахрах Д.Н., Россинский Б.В., Старилов Ю.Н. Административное право: Учебник для вузов, 3-е изд., пересмотр. и доп., <<НОРМА>>, М., 2008
17. Сергеев А.П. Гражданское право: Учебное посовие. <<ПРОСПЕКТ>>, М., 2005
18. Пиляева В.В. Гражданское право: Части общая и особенная, учебник. <<Велби>>, М., 2004
19. Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4- րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:

ՆՈՐՄԱՏԻՎ ՆՅՈՒԹ

Սահմանադրություններ

20. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), 1995
21. Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն, 1993
22. Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրություն, 1787

Օրենսգրքեր, օրենքներ

23. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 2007
24. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, 1999
25. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, 1998
26. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք 1998
27. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 2013
28. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, 1985
29. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2004
30. <<Զանգվածային լրատվության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2003
31. <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2002
32. <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2002
33. <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 1995
34. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2002
35. <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, 2001